01/10.1/9302-09

2009-12-17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Սամվել Նիկոյանի, Գալուստ Սահակյանի, Հովհաննես Սահակյանի, Կարեն Ավագյանի, Համլետ Հարությունյանի, Արման Սահակյանի և Էդուարդ Շարմազանովի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ։

1. «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝

1) 1-ին հոդվածում «տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Երևանի» բառով՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի հետ հակասությունը վերացնելու նպատակով.

2) հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները՝

ա. 1-ին հոդվածով օրենսգրքի 21-րդ հոդվածը նոր խմբագրությամբ շարադրելու դեպքում անհրաժեշտ է նշել նաև հոդվածի համարը և վերնագիրը,

բ. 1-ին հոդվածում «(այսուհետ՝ օրենք)» բառերն անհրաժեշտ է հանել, քանի որ դրանք նախագծի տեքստում այլևս չեն օգտագործվում,

գ. 1-ին հոդվածով նախատեսված 21-րդ հոդվածի մասերի համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին։

2. «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝

1) 1-ին և 2-րդ հոդվածներն անհրաժեշտ է միացնել, քանի որ երկու հոդվածներով էլ փոփոխություն և լրացում է կատարվում օրենսգրքի միևնույն 67-րդ հոդվածում։ Միաժամանակ 1-ին հոդվածից անհրաժեշտ է հանել «ՀՕ-284» բառերը՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները.

2) առաջարկում ենք նաև գործող օրենքների միջև հակասությունը վերացնելու նպատակով վերնագրում «փոփոխություն» բառը փոխարինել «փոփոխություններ» բառով և նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով՝

«Հոդված . Օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետում, 101-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում, 108-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետում, 123-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետում և 138.8-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետում «Հայաստանի Հանրապետության իշխանության մարմինների ղեկավար աշխատողների գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերը փոխարինել «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերով։»։

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքների նախագծերի փաթեթն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում։

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Գևորգ Մալխասյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-769-17.11.2009-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Կուսակցությունների մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին

Հոդված 1. «Կուսակցությունների մասինե Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-410-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 21-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Կուսակցությունը միակ հասարակական միավորումն է, որն իրավունք ունի թեկնածուներ առաջադրել Հայաստանի Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի պատգամավորների, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների եւ ավագանու ընտրություններում։

Հայաստանի Հանրապետության Նախագահի թեկնածուի առաջադրումը կատարվում է կուսակցության համագումարի կամ կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի որոշմամբ։

Ազգային ժողովի ընտրություններում կուսակցության պատգամավորության թեկնածուների առաջադրումը կատարվում է կուսակցության մշտական գործող ղեկավար մարմնի որոշմամբ։

Հայաստանի Հանրապետության Նախագահի եւ Ազգային ժողովի պատգամավորների թեկնածուների առաջադրմանը վերաբերող կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի նիստին մասնակցում են կուսակցության տարածքային եւ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները՝ կուսակցության կանոնադրությամբ սահմանված կարգով։»։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից։

Նախագիծ
Պ-769[1]-17.11.2009-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1999 թվականի փետրվարի 5-ի ՀՕ-284 ընտրական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 67-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

1. Կուսակցությունը Հանրապետության Նախագահի թեկնածու առաջադրում է «Կուսակցությաունների մասինե Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ իր համագումարի կամ մշտապես գործող մարմնի որոշմամբ։ Յուրաքանչյուր կուսակցություն իրավունք ունի առաջադրելու Հայաստանի Հանրապետության Նախագահի մեկ թեկնածու։ե։

Հոդված 2. Օրենսգրքի 67-րդ հոդվածի 7-րդ մասը «կուսակցությանե բառից հետո լրացնել «համագումարի կամե բառերը։

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից։

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

AJV-51-03

«Կուսակցությունների մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի եւ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի փաթեթի ընդունման անհրաժեշտության

«Կուսակցությունների մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի եւ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Կուսակցությունների մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում եւ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում տեղ գտած բացթողումները լրացնելու եւ հակասությունները վերացնելու հրամայականով: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված է, որ «Կուսակցությունը Հանրապետության Նախագահի թեկնածու առաջադրում է իր մշտապես գործող մարմնի որոշմամբ:...ե, մինչդեռ, ըստ «Կուսակցությունների մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի, կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի որոշմամբ առաջադրվում են միայն Ազգային ժողովի պատգամավորության թեկնածուները:

Ներկայացված փոփոխությունների արդյունքում Հայաստանի Հանրապետության Նախագահի թեկնածության առաջադրման իրավունք է վերապահվում ինչպես կուսակցության համագումարին, որպես կուսակցության բարձրագույն մարմնի, այնպես էլ կուսակցության մշտապես գործող մարմնին, որը կուսակցության անունից իրականացնում է նրա՝ որպես իրավաբանական անձի լիազորությունները: